
**ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԿԱՅՈՒՆ ՁԵՎԵՐԸ ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆԻ
ՊՈՆԶԻԱՅՈՒՄ**

ՆՌԱՆԵ ՍԱՐՈՅԱՆ

Արշակ Չոպանյանը իր 1889-1907 թթ. ստեղծագործությունները զետեղում է «Քերթուածներ» ժողովածուում և տպագրում 1908 թվականին: Այն կազմված է մի քանի մասից, որոնք ունեն հետևյալ վերնագրերը՝ «Արշալույս», «Ժամերուն կարավանը», «Անձկություն», «Տեսիլներ», «Գիշերին մեջ», «Բլուրին վրայ»: Առաջին երեքը գրվել են 1889-1893 թթ. և հրատարակվել Կ.Պոլիսի թերթերում, ապա առանձին գրքույկով, իսկ մնացածը՝ Փարիզում 1897-1907 թթ.¹: Ժողովածուն հարուստ է եվրոպական և արևելյան բանաստեղծական կայուն ձևերով՝ սոնետ, ռոնդո, տերցետ, վիլանել, քառյակ:

Չոպանյանի ժողովածուում սոնետների թիվը տասից ավելի է: Դրանք են՝ «Կապույտ հնչյակ», «Մոայլ հնչյակ», «Լոին երաժշտություն», «Ճերմակ հնչյակ», «Կինը», «Պետտրիչե», «Իմ փունջս», «Լուսինը», «Անձայն ու աղվոր զերդ աստղ ու ծաղիկ...» և երեք սոնետից բաղկացած «Վերհիշում» շարքը: Չոպանյանը պահել է դասական իտալական սոնետի կառուցվածքը (երկու քատրեն և երկու տերցետ): Սակայն էական է այն, որ և՛ օկտավներում, և՛ սեստետներում հանգավորման շատ եղանակներ են կիրառված: Օկտավում հանդիպում ենք հանգավորման կից, խաչաձև և օղակաձև եղանակների, որոնցից հաճախադեպը վերջինն է: Այսպիսի հանգավորում ունեն «Կապույտ հնչյակ», «Մոայլ հնչյակ», «Հնչյակ», «Կինը», «Պետտրիչե» և «Վերհիշում» շարքի սոնետները: Թեև օկտավներում խաչաձև հանգավորումն է գործում, սակայն ամեն քատրեն իրեն հատուկ հանգեր ունի: Այսինքն՝ օկտավում առկա է a-b-a-b/c-d-c-d հանգավորում:

Կապույտ հնչյակ

Աստղերուն պես, որոնց շնորհն ավելի քաղցր է և սուրբ, a

Որովհետև հեռավոր և անմատույց մեր ձեռքին, b

Եվ որոնց ջինջ բիբերուն ժպիտն աղու, զերանուրբ. a

Աննյութ տենչով մը միայն կյոթոթոացնե մեր հոգին, b

Աստղերուն պես, գողտր աղջիկ, մեկուսացի՛ր, հեռացի՛ր, c

¹ Տե՛ս Ա. Չոպանյան, Քերթուածներ, Փարիզ, 1908, էջ ԺԲ:

*Թն առ ու վե՛ր քարձրացիր կրքերու թանձր աղբյուսեն. d
Թույլ մի՛ տար, որ շրթներուդ դպչի համբույրը զագիր, c
Թույլ մի՛ տար, որ ցանկությունք ծոցիդ վարդերը պղծեն: d*

«Անձայն ու աղվոր զերդ աստղ ու ծաղիկ...», «Ճերմակ հնչյակ», «Լոին երաժշտություն» սոնետների օկտավներում երկու քատրենն էլ ունեն օղակաձև հանգավորում՝ a-b-b-a/a-b-b-a: «Լուսինը» սոնետի օկտավը ևս օղակաձև հանգավորում ունի: Տարբերությունն այն է, որ քատրենների առաջին և չորրորդ տողերում, ի տարբերություն երկրորդ և երրորդ տողերի, հանգերը քատրենից քատրեն փոխվում են: Այսպիսով «Լուսինը» սոնետը օկտավում ունի a-b-b-a/a-c-c-a հանգավորում:

*Չմեռվան պայծառ երկնքին մեջեն a
Կթավալի մեծ լուսինը ոսկի, b
Ու խաղաղավետ օդին մեջ ծավի b
Անոր ջինջ շողե՛րը կպաղպաջեն: a*

*Գետինն, երեկվան մաղձոտ անձրևեն a
Խոնավ, կփռե լճակներ աղտոտ, c
Եվ այդ հայլիներուն մեջ շարժուն և աղոտ՝ c
Լուսնին դեմքն ազնիվ, բյուրապատկորեն... a*

Սոնետներից միայն «Իմ փունջս» ստեղծագործությունն է օկտավում հետևում կից հանգավորման ձևին, ընդ որում՝ ամեն քատրեն ունի իրեն բնորոշ հանգեր՝ a-a-b-b/c-c-d-d: Չոպանյանը սոնետներ գրելիս օկտավներում կիրառել է հանգավորման չորս ձև՝ a-b-a-b/c-d-c-d, a-b-b-a/a-b-b-a, a-b-b-a/a-c-c-a և a-a-b-b/c-c-d-d:

Պատկերը այլ է սեստետի պարագայում, որտեղ կիրառված է հանգավորման ութ ձև այն դեպքում, երբ Չոպանյանի սոնետների թիվը բոլորովին էլ մեծ չէ: Սեստետում առկա են հանգավորման հետևյալ ձևերը՝ e-f-e/f-g-g («Կապույտ հնչյակ», «Մռայլ հնչյակ», «Պեատրիչե», «Վերհիշում» շարքի Ա և Բ սոնետները), e-f-e/f-e-e («Վերհիշում» շարքի Գ սոնետը), e-f-e/g-f-g («Հնչյակ»), c-c-d/e-f-e («Անձայն և աղվոր զերդ աստղ ու ծաղիկ...»), c-c-d/e-c-e («Ճերմակ հնչյակ»), d-d-e/f-e-f («Լոին երաժշտություն»), e-e-f/g-g-f («Իմ փունջս»), d-e-d/g-e-g («Լուսինը»): Ինչպես տեսնում ենք, առաջին տերցետում գերակշռում է e-f-e հանգավորումը:

Կապույտ հնչյակ

*Փաթթե՛ մարմինդ ու հոգիդ քողերու մեջ սպիտակ. e
Շուշա՛ն եղիր, տեսլացի՛ր. թող մեջդ կինն անհետի՛ f
Ու երևան գա հրեշտակն, անբիժ, թեթև, լո՛ւյս համակ: e*

*Եվ սերդ թող սրտիս խորն, ամենեն խորն հաստատվի, f
Ինչպես պատկե՛րը Կույսին՝ մատուռին մեջ առանձին, g
Որուն մարդիկ ծնրադիր, աղոթքներով կմերձին: g*

Հետաքրքրական է, որ Չոպանյանը սեստետում e-f-e/f-e-f կամ e-f-e/e-f-e հանգավորման ամեննին չի դիմել: Մյուս կարևոր առանձնահատկությունն այն է, որ օկտավի ոչ մի հանգ սեստետում չի կրկնվում, եթե նույնիսկ այնտեղ կա չորս հանգ: Այսպիսով՝ Չոպանյանը մի սոնետում կարող է կիրառել հինգից մինչև յոթ հանգ:

Սոնետի տողերի երկարությունը պայմանավորված է տվյալ լեզվի առանձնահատկությամբ և բանաստեղծի նախընտրությամբ: Պատահում է, որ հեղինակի ստեղծագործական նմուշներում հանդիպում են և՛ կարճ, և՛ երկար տողերով սոնետներ: Չոպանյանի սոնետների տողերը բաղկացած են ութ («Կինը»), տասը («Լուսինը»), տասնմեկ («Իմ փունջս»), տասներկու («Հնչյակ»), տասներեք («Պետտրիչե»), տասնչորս («Կապույտ հնչյակ»), տասնհինգ («Մռայլ հնչյակ») վանկերից: Հանգաստեղծիչ վանկերից ոչ մեկը իզական հանգ չունի: Չոպանյանը տողերի վերջում գործածում է միայն ու միայն արական հանգեր: Հատածներին նախորդող վանկերում երբեմն հանդիպում են իզական հանգեր, բայց դրանց թիվը փոքր է:

Անդրադառնանք Չոպանյանի ռոնդոներին²: «Ռոնտո», «Ճառագայթը», «Փրփուրը», «Այգը», «Հովը», «Սույը», «Աստղերը», «Գիտե՛ս», «Երկու աղվոր աշուկներ» ռոնդոները կազմված են տասնչորս տողից և հետևում են հանգավորման միևնույն եղանակին՝ a-b-a-b-a/a-b-a-R/a-b-b-a-R, որտեղ R-ը ռեֆրենն է: Հատկանշական է, որ ռեֆրենը ենթարկվում է դասական ռոնդո սինքվեյնի³ ռեֆրենի կանոնին, այսինքն՝ կրկնվում է միայն առաջին տողի սկիզբը: «Ռոնտոն» սկսվում է «Միս-մինակ իմ ամլաբար...» տողով, իսկ ռեֆրենը կրկնում է միայն «միս-մինակ» արտահայտությունը:

Լալկան անձրևն անդադար a

Կթրզկա իր երզը թաց, b

Ես կխորհիմ անբարբառ, a

Միս-մինակ: R

Կխորհիմ քու լուսավառ a

Դեմքիդ, որ սիրտս է բանտած, b

Ու ես կուլամ ձայնով ցած b

Իմ սենյակիս մեջ խավար, a

Միս-մինակ: R

Նույնպիսին է նաև «Ճառագայթը» ռոնդոյի ռեֆրենը, որը կրկնում է առաջին «Արևեն փրթած խարտյաշ մագ նրբին...» տողի սկզբի «արևեն փրթած» արտահայտությունը:

Չոպանյանի մյուս ռոնդոները ռոնդելներ են, կազմված են տասներեք

² Տե՛ս The Princeton Encyclopedia of Poetry & Poetics, Fourth Edition, 2012, էջ 1225:

³ Այն ռոնդոները, որոնց առաջին տունը կազմված է հինգ տողից, կոչվում են ռոնդո սինքվեյն, չորս տողից՝ ռոնդո քատրեն, երեք տողից՝ ռոնդո տերցետ:

տողից, և բոլորը, բացառությամբ «Աստղերը» ռոնդոյի, ունեն A-B-b-a/a-b-A-B/a-b-b-a-A հանգավորում, որտեղ A-ն և B-ն կատարում են ռեֆրենի դեր և ամբողջությամբ կրկնվում երկրորդ և երրորդ տների վերջում, ընդ որում A-ն՝ երեք անգամ (առաջին, յոթերորդ, տասներեքերորդ տողեր), իսկ B-ն՝ երկու (երկրորդ և ութերորդ տողեր): Եթե այս ռոնդոների վերջին տողը դնենք մի կողմ, ապա կտեսնենք, որ առաջին և երրորդ տները ունեն օղակաձև հանգավորում, իսկ երկրորդ տունը՝ խաչաձև: Հանգավորման հենց այս առանձնահատկությունից փոքր-ինչ շեղվում է «Աստղերը» ռոնդելը: Այս ռոնդելի բոլոր տներն ունեն օղակաձև հանգավորում՝ A-B-b-a/b-a-A-B/a-b-b-a-A: Եթե առաջին և երրորդ տներում արտաքին (առաջին և չորրորդ) տողերը a հանգով են, ապա երկրորդ տան արտաքին տողերում իշխում է b հանգը: Ասվածը ավելի լավ պատկերացնելու համար նայենք «Աստղերը» ռոնդելի առաջին երկու տները.

*Աստղերը լուռ ցավեր են, A
Որոնք կ'այրին հավիտյան, B
Արցունքներ ջինջ թախծության b
Կախված երկնի քիբերեն: a*

*Գիշերին ծոցն օվկիան b
Բոցոտելով քաղցրորեն, a
Աստղերը լուռ ցավեր են, A
Որոնք կ'այրին հավիտյան: B*

Փոխելով միայն երկրորդ տան առաջին երկու տողերի հանգերի տեղը՝ բանաստեղծը խաչաձև հանգավորման փոխարեն ստեղծել է օղակաձև հանգավորում, ինչը, սակայն, ամենևին չի խախտել բանաստեղծության տաղաչափական ներդաշնակությունը:

Չոպանյանը երկար տողերով ռոնդոներ չի գրել. գերակշռում են յոթվանկանիները («Ռոնտո», «Փրփուրը», «Սուլը», «Աստղերը», «Գիտե՛ս», «Երկու աղվոր աչուկներ»): Միայն «Հովը» ռոնդոն ունի ութվանկանի տողեր, իսկ «Այգը» և «Ճառագայթը» ռոնդոները տասնավանկ տողերից են կազմված:

Բանաստեղծական հաջորդ ձևը, որ հետաքրքրել է Չոպանյանին, տերցետն է⁴, որը ևս իտալական բանաստեղծական ձև է: Չոպանյանի տերցետները չորսն են՝ «Միրերգ առ լուսին», «Ծովուն», «Միրերգ», «Սովերները»: Սրանցից առաջին երկուսը տրիպլետ են⁵: «Միրերգ առ լուսինը» կազմված է վեց տնից և ունի a-a-a/b-b-b/c-c-c/d-d-d/e-e-e/d-d-d հանգավորում: Տրիպլետի չորրորդ և վեցերորդ տներն են.

Ըլլայի՛ անտառն, որուն խավարչտին

⁴ Տե՛ս The Princeton Encyclopedia Of Poetry & Poetics, Fourth Edition, էջ 1423:

⁵ Տրիպլետը տերցետի տեսակ է, որը ունի a-a-a/b-b-b/c-c-c հանգավորում:

*Ոստերուն մեջեն հուշիկ կսահին,
Կկախվին ոսկի մագերդդ նրբին...*

*... Ա՛խ, գեթ շիրիմն ըլլայի ցրտին,
Ուր գըզվող շողերդ կուզան մեղմագին
Հոսել լույս թախիծն իրենց արցունքին:*

Ինչպես տեսնում ենք, երկու տներն էլ ունեն միևնույն հանգը: Սրանից, սակայն, չպետք է ենթադրել, որ հեղինակը ցանկացել է նույն հանգը օգտագործելու միջոցով միմյանց կապել երկու տները: Տվյալ բանաստեղծության մեջ նույն հանգը ընտրելը ստացվել է անկախ հեղինակի կամքից, որովհետև եթե նա ուզենար տները նույնանման հանգով իրար կապել, ապա այդ կերպ կվարվեր նաև մնացած տների հետ: Իսկ տրիպլետներում տները հանգի միջոցով իրար կապելու խնդիր չկա: Ասվածի ապացույցն է «Ծովուն» տրիպլետը, որը ունի a-a-a/b-b-b/c-c-c/d-d-d/e-e-e/f-f-f հանգավորում: Այսպիսով, «Սիրերգ առ լուսին» տրիպլետում որոշ տներում նույն հանգի կրկնությունը պատահակա- նություն է: Պատկերը փոխվում է տերցա ռիմաների պարագայում, որտեղ ամեն տան երկրորդ տողը հանգավորվում է հաջորդ տան առաջին և երրորդ տողերի հետ: Այդպիսին են «Սիրերգ» և «Ստվերները» տերցա ռիմաները, որոնց տներում իշխում է a-b-a/b-c-b/c-d-c/d-e-d... հանգավորումը: Տերցա ռիմաները տների քանակով գերազանցում են տրիպլետներին: «Սիրերգը» ունի տասնչորս տուն, իսկ «Ստվերները»՝ քսաներկու: Ընդ որում, երկու բանաստեղծության եզրափակիչ տներն էլ երեքտողանի չեն: «Սիրերգի» վերջին տունը կազմված է ընդամենը մեկ տողից և հանգավորվում է նախորդող տան երկրորդ տողի հետ.

*Եվ դարե ի դար, սիրով բոցակեզ a
Միրտերը մատաղ, երգիս շողունեն b
Քեզ գուշակելով, պիտի պաշտեն քեզ a*

Ու զիս նախանձով պիտի երանեն: b

«Ստվերները» տերցա ռիմայում Չոպանյանը հանգավորման միջոցով վերջին քառատողը կապում է նախորդ տան հետ:

*-«Ո՞վ էս դուն»:- «Ես թագուհին եմ այս վայրին. a
Միակ Ոգին եմ, որ ողջ է և որուն b
Կհնազանդի հիմա սիրտը մարդկային: a*

*Տարակույսն եմ»:- «Բայց ելքն ո՞ւր է, գթություն, b
Ելքն այս սավղին ու ամեն հույս է մեռած...»: c
Ոչ մեկ ձայն ինձ պատասխանեց, և անհուն b
Խավար մ'իջավ ծածկեց ամեն բան հանկարծ: c*

Հարկ է ընդգծել, որ այս տերցետում ևս կան տներ, որոնք իրար չեն հաջորդում, բայց ունեն միևնույն տիպի հանգավորում: Այսպես, -ին հանգը հանդիպում է առաջին, վեցերորդ, յոթերորդ, տասնչորսերորդ, տասնհինգերորդ, քսաներորդ և քսանմեկերորդ տներում, -ի հանգը՝ առաջին, երկրորդ, տասներեքերորդ և տասնչորսերորդ տներում, -ուն հանգը՝ հինգերորդ, վեցերորդ, քսանմեկերորդ և քսաներկուերորդ տներում, -ույն հանգը՝ տասներկուերորդ, տասներեքերորդ, տասնվեցերորդ և տասնյոթերորդ տներում: Այստեղ ուշադրություն չպետք է դարձնել իրար հաջորդող տների վրա, որովհետև դրանք այսպես թե այնպես հանգավորվում են իրար հետ: Շեշտը պետք է դնել իրարից բավականին հեռու գտնվող տների վրա, որոնք նույն հանգավորումն ունեն: Սա նման է «Միրերգ առ լուսին» տրիպլետին: Այստեղ խնդիրը իրարից հեռու տները հանգավորման միջոցով իրար կապելը չէ: Մնում է միայն ենթադրել, որ բանաստեղծը իրեն ավելի լավ է զգացել միևնույն հանգերը գործածելով և բազմազան հանգեր ստեղծելու վրա ուշադրություն չի դարձրել:

Չոպանյանի տերցետների տողերը վանկերի քանակով իրարից չեն տարբերվում: «Միրերգ առ լուսին» «Միրերգ» և «Ծովուն» տերցետների տողերը տասը, իսկ «Սովերները» տերցետը տասնմեկվանկանի են:

Եռատող տներից կազմված բանաստեղծական հաջորդ ձևը, որի նկատմամբ անտարբեր չէ Չոպանյանը, վիլլանետն է: Դասական վիլլանետը⁶ կազմված է տասնհինգ տողից՝ վեց եռատող և մեկ քառատող: Վիլլանետի առաջին տան առաջին և երկրորդ տողերը կրկնվում են հաջորդ տներում: Հենց այս տողերից է կազմվում վերջին տան վերջին երկտողը՝ A1-b-A2/a-b-A1/a-b-A2/a-b-A1/a-b-A2/a-b-A1-A2, որտեղ A1-ը և A2-ը ռեֆրեն են և հանգավորվում են a-ի հետ: Սա կրկնությունների վրա հիմնված բանաստեղծություն է, որտեղ մեծ մասամբ հանդիպում ենք հուզիչ կամ գողտրիկ պատկերների: Չոպանյանը հեղինակել է երեք վիլլանետ՝ «Մութքը», «Վերջալույս», «Մրրիկ»: Առաջին երկուսը ամբողջովին հետևում են դասական վիլլանետի տների քանակին և հանգավորմանը: Բոլորն էլ յոթվանկանի տողերով են: Տների քանակով տարբերվող է «Մրրիկ» վիլլանետը, որն ունի տասը տուն: Այս վիլլանետի հանգավորումը հետևյալն է՝ A1-b-A2/a-b-A1/a-b-A2/a-b-A1/a-b-A2/a-b-A1/a-b-A2/a-b-A1/a-b-A2/a-b-A1-A2: Սա ոչ մի բանով չի տարբերվում վեց տնից բաղկացած վիլլանետների հանգավորումից: Միակ տարբերությունը տների քանակն է:

Մրրիկ

(Առաջին տուն)

Դուրսը, մութին մեջ անհուն,

Գալարվելով մոլեգին

Կոռնան հրեշնե՛րը թաքուն:

⁶ St' u The Princeton Encyclopedia Of Poetry & Poetics, Fourth Edition, 2012, էջ 1551:

(Տասներորդ տուն)
Ահով արբշիռ, ցայգն ի բուն,
Կունկնդրեմ սև մեծ երգին,
Դուրսը, մութին մեջ անհուն,
Կերզեն հրեշնե՛րը թաքուն:

Չոպանյանը բանաստեղծության վերջին տողում փոքր-ինչ շեղվել է ռեֆրենը նույնությամբ կրկնելու կանոնից և «կոռնան» բառը փոխել «կերզեն» բառով:

Վիլլանելները ամբողջովին հիմնված են կրկնությունների վրա, և սպասել, որ բանաստեղծական այս տեսակը կարող է ներկայացնել խոհափիլիսոփայական հարցեր, այդքան էլ ճիշտ չէ: Վիլլանելներով կարելի է պատկերել բնության տեսարանները կամ զգացմունքներ ու զգացողություններ: Այսպես է վարվել նաև Չոպանյանը՝ շեշտը դնելով բնապատկերների վրա:

Բացի եվրոպական բանաստեղծական ձևերից՝ Չոպանյանը դիմել է նաև արևելյան բանաստեղծական ամենահայտնի ձևին՝ քառյակին: Նա հետաքրքրվել է ինչպես օտար ստեղծագործողների քառյակներով, այնպես էլ Քուչակի հայրեններով: Հարկ է նշել, որ Չոպանյանը ուսումնասիրություններ է գրել նրա մասին՝ բարձր գնահատելով վերջինիս տաղանդը. «Դառնալով Քուչակին, թող ոչ ոք չափազանցություն չնկատե էթե՛ յայտարարեմ որ այդ գմայլելի երգիչն արտագրած ըլլալը միայն բաւական է որպէս զի Հայ ցեղը յարգանքի արժանի ըլլայ եւ որպէս զի մենք մեզ հպարտ զգանք Հայ ըլլալնուս»⁸: Չոպանյանը ընդգծում է, որ Քուչակը յուրահատուկ է ներկայացնում սերը. «Քուչակի այքին, սերը ամբողջ կեանքն է, ամբողջ ցավը, ամբողջ երջանկութիւնը և ամբողջ խորհուրդը»⁹: Չոպանյանի քառյակները, սակայն, ամեննին էլ նման չեն Քուչակի հայրեններին. սիրո թեման ընդհանրապես բացակայում է: Դրանք փիլիսոփայական բնույթի են.

Ոչնչին ծոցին մեջ փռշին կպարե,
Ոգի մը խելագար պարը կվարե.
Եվ անհմաստ հեկքոտ պարին մեջեն միշտ
Կսուլե ձանձրութիւն հովը կապարե:

Չոպանյանի երեք քառյակներն էլ ունեն նմանություններ. նախ՝ գրված են a-a-b-a հանգավորում ունեցող կարճ տողերով, և վանկերի քանակը չի գերազանցում տասնմեկը: Քառյակներում տողերի և բառերի կրկնությունների չենք հանդիպում:

Չոպանյանին հետաքրքրել են և՛ հայ, և՛ համաշխարհային գրակա-

⁷ Տե՛ս Գ. Դավաթյան, Արշակ Չոպանյան, Եր., 1987, էջ 186:

⁸ «Անահիտ» հանդես, 1902, թիվ 9, էջ 195:

⁹ Նույն տեղում, էջ 196:

նության ականավոր ներկայացուցիչների ստեղծագործությունները: Նա ոչ միայն ուսումնասիրում, այլ նաև եռանդորեն հայ ժողովրդին էր ներկայացնում համաշխարհային գրականությունը: «Չոպանյանը այն բացառիկներից է, ովքեր կարող էին ընդգրկել մեծ տարածությունը, որ ձգվում է Նարեկացուց մինչև Չարենց ու խորհրդահայ նոր գրողները: Վերջապես, նա հրաշալի գիտեր ու գրում էր նաև ֆրանսիացի, եվրոպացի գրողների մասին Դոդե, Մոպասան, Իբսեն, Հայնե, Միցկևիչ և ուրիշներ»¹⁰: Համաշխարհային գրականության մասին ունեցած գիտելիքներն էլ հնարավորություն էին տալիս Չոպանյանին յուրացնելու բազմաթիվ բանաստեղծական կայուն ձևեր և հարուստ ու բազմազան դարձնելու իր ստեղծագործությունների արտահայտչամիջոցները:

Բանալի բառեր – *Արշակ Չոպանյան, բանաստեղծական կայուն ձևեր, սոնետ, տերցետ, տրիպլետ, վիլլանել, ռոնդո, ռոնդել, քառյակ, ռեֆրեն*

НРАНЕ САРОЯН – Твёрдые стихотворные формы в поэзии Аршака Чопаняна. – Видный литературный критик Аршак Чопанян (1872 – 1954) был известен также в качестве поэта. Его стихи посвящены по преимуществу так называемым вечным темам – родине, любви, природе и часто носят философский характер. Чопанян превосходно знал мировую поэзию, и не удивительно, что у него нередко встречаются широко распространённые в ней, особенно в старину, твёрдые формы, как европейские, так и восточные: сонет, терцет, триолет, вилланель, рондо, рубаи. Разнообразие форм диктует поэту и разнообразную ритмику, а подчас и музыкальную выразительность, мелодичность.

Ключевые слова: *Аршак Чопанян, твёрдые стихотворные формы, сонет, терцет, триолет, вилланель, рондо, рондель, катрен (рубаи), рефрен*

NRANE SAROYAN – Fixed Poetic Forms in Arshak Chopanyan's Poetry. – Arshak Chopanyan is famous not only as a literary critic but also as a poet. In his poems, he pays attention to themes such as love for a country, love for a woman, nature, philosophy. It's not a surprise that Chopanyan knowing foreign literature also uses European and Eastern fixed poetic forms such as sonnet, tercet, triplet, villanelle, rondeau, rondelle, quatrain (rubai). Themes about which Chopanyan created his poems are understandable both for Armenians and foreigners because everyone is familiar with them, and the rhythm and different kinds of refrain make Chopanyan's poems more melodic.

Key Words: *Arshak Chopanyan, fixed poetic forms, sonnet, tercet, triplet, villanelle, rondeau, rondelle, quatrain (rubai), refrain, volta*

Ներկայացվել է՝ 18.03.2020, Գրախառվել է՝ 23.04.2020, Ընդունվել է տպագրության՝ 18.12.2020

¹⁰ Վ. Գաբրիելյան, Դասականների ժամանակը, Եր., 1997, էջ 120: